Հարգելի Տիրայր Մուրադյան,

Ի պատասխան Ձեր կողմից 05.10.2022 թվականին ներկայացված հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացվում է պայմանագրի հիման վրա, որի կնքման իրավական հիմքերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 01.02.2022թ.-ի «ՀՀ էլէկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 358-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման (այսուհետ՝ Որոշում) 9-րդ գլխով:

2. Սպառողների կողմից մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց մատուցված ծառայության արժեքի հաշվարկման և վճարման կարգը սահմանվում է Որոշման 15-րդ գլխով:

Ինչպես նաեւ Ընկերության կողմից հաշվառքի սարքերի տեղադրմանն առնչվող իրավակարգավորումներն առկա են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 01.02.2022թ.-ի «ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման մեջ:

3. Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գաղտնապահական տեղեկատվություն է համարվում լիցենզավորված անձի ֆինանսական վիճակի և առևտրային գաղտնիքների վերաբերյալ տեղեկատվությունը կամ այլ տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնասել լիցենզավորված անձին, ինչպես նաև սպառողներին վերաբերող՝ լիցենզավորված անձի մոտ առկա տեղեկությունները.

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի՝ լիցենզավորված անձը պարտավոր է իր սպառողների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների, ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվությունը համարել և պահել գաղտնի: Ուստի պահանջվող տեղեկատվությունը համարվում է գաղտնի տեղեկատվություն և ենթակա չէ տրամադրման:

Հարգանքով՝

Հայաստանի էլեկտրական ցանցեր